ԿԱՐԾԻՔ

ՀՌԻՓՍԻՄԵ ԿԱՐԱՊԵՏԻ ՄԱՐՈՆՅԱՆԻ <<Հագուստի մոդելավորման դասավանդման հիմունքները ազգային տարազի համատեքստում>> խորագրով ատենախոսության վերաբերյալ, ԺԳ.00.02. /դասավանդման և ուսուցման մեթոդիկա/ կերպարվեստ/ մասնագիտությամբ/, ներկայացված մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար:

Բուհական կրթության մարդասիրական ու ժողովրդավարացման համար պայմաններում առանձնահատուկ արդիականություն է ստանում մասնագիտական կրթության խնդիրը:

Այս տեսանկյունից Հ. Մարոնյանի ատենախոսությունը ժամանակահունչ, խորհիմն հետազոտություն է, որում մենագրորեն լուծում է տրվում ուսանողների աշխատանքային գեղագիտական դաստիարակության խնդրին <<Հագուստի մոդելավորում>> համալիր դասընթացի ուսուցման միջոցներով:

Գրախոսվող սույն ատենախոսությունը գրված է տրամաբանորեն նախագծված ծրագրին համապատասխան և ներառում է հասարակական – մշակութային կարևոր նշանակություն ունեցող խոշոր գիտական հիմնահարցի բազմամյա ուսումնասիրություն և մշակում: Հետազոտությունն անցկացվել է 9 տարվա ընթացքում /2016-2024թթ/:

Ատենախոսությունը բաղկացած է՝ ներածությունից, երկու գլուխներից / վեց ենթագլուխներով/, ամփոփումից, մասնագիտական ցանկից և հավելվածից:

Ատենախոսը հստակ որոշարկում է հիմնախնդիրը, գիտական ենթադրությունը, գիտական նորույթը, առաջադրված խնդիրները, հետազոտության առարկան և օբյեկտը: Հանգամանորեն մշակված և տեսաբանական ու փորձարարական հետազոտության ձևատեսությունը: Մասնավորապես հետազոտության մեջ նրա կիրառած ձևատեսության համակարգը թույլ է տալիս խորությամ և հանգամանալիորեն լուծել առաջադրված խնդիրները:

Հետազոտության ձևատեսության համակարգը ներառում է .

. Հագուստի մոդելավորման, գեղագիտության, մանկավարժության, հոգեբանության, արվեստի իմացության ձևատեսությունների առնչությամբ գրականության ուսումնասիրություն և տեսաբանական վերլուծություն՝ հետազոտության գիտական հիմքերի մշակման համար:

. Բուհական կրթության ավանդական և ընթացիկ մանկավարժական փորձի ուսումնասիրում, վերլուծություն և ընդհանուր եզրակացություն:

. Դասախոսների հաշվառում՝ անկետավորում, հագուստի մոդելավորում դասընթացի պարզաբանման նպատակով, ուսանողների անկետավորում՝ հագուստի մոդելավորման նկատմամբ հետաքրքրությունների և պահանջմունքների ուսումնասիրման նպատակով:

. Ուսումնական գործընթացի նպատակաուղղված տևական դիտարկումներ, ներառյալ զրույցներն ու ուսումնական պրակտիկաները:

. Ուսումնասիրություն ուսանողների հագուստի մոդելավորման նկատմամբ պահանջմունքների, գեղագիտական ճաշակի, դատողությունների դրսևորման, ախտորոշիչ-վերլուծական, ուսուցողական, փորձարարական աշխատանքների հիմքով:

Բակալավրիատի I-IV կուրսերի ուսանողների ուսումնառության գործունեության արդյունքների ուսումնասիրություն և վերլուծություն՝ նրանց ստեղծագործական կենսունակությունը որոշարկելու նպատակով:

Ատենախոսության մեջ դրական միտում է այն, որ նրանում ծավալուն ներկայացված են բազմամյա գիտափորձի արդյունքները՝ տեսանկյունից բացի նաև իրազննական նյութեր, աղյուսակներ, պատկերազարդումներ, նախագծումներ: Դրանց համալիրը համոզիչ կերպով ցուցում է առաջադրված գիտական դրույթների իրավաչափությունը, հաստատուն գիտական

ենթադրության ուղղվածությունը, ակնառու կերպով լուսաբանում գիտափորձի ընթացքը և նրա հիմնական արդյունքները:

Անցկացված փորձարարության արդյունքում լուծված են առաջադրված բոլոր խնդիրները: Ավելի հստակ՝

- Ուսումնասիրվել և տեսական վերլուծության է ենթարկվել խնդրին վերաբերվող մանկավարժահոգեբանական, արվեստագիտական տեսություններն ու մոտեցումները:
- Բացահայտվել է << Հագուստի մոդելավորում>> համալիր դասընթացի գիտատեսական հիմքերը՝ որպես ԲՈՒՀ ում դասավանդվող ուսումնական առարկայի:
- Վերլուծվել է <<Հագուստի մոդելավորում>> համալիր դասընթացի ուսուցման տեխնիկա-տեխնոլոգիական առանձնահատկությունները:
- Սահմանվել է << Հագուստի մոդելավորում>> համալիր դասընթացի ուսուցման ժամանակակից մեթոդների և տեխնոլոգիաների կիրառման արդյունավետությունը ազգային տարազի ուսումնասիրման համատեքստում:
- Փորձարարությամբ հիմնավորվել է <<Հագուստի մոդելավորում>> համալիր դասընթացի ծրագրային բովանդակությունը:
- Մշակվել է << Հագուստի մոդելավորում>> ինտեգրված դասընթացի ուսուցման արդյունավետ մեթոդիկա և փորձարարությամբ հիմնավորվել այն:

Առաջադրված խնդիրների լուծումը որոշարկել է հետազոտության գիտական նորույթը, նրա տեսական և գործնական արժեքը:

Առաջադրված խնդիրների լուծումը հիմնավորել է հետազոտության գիտական նորույթը, նրա տեսական և գործնական արժեքը:

Հարկ է նշել, որ անցկացված հետազոտության և, ամենից առաջ, խորը տեսաբանական վերլուծության ու գիտափորձի արդյունքում ատենախոսին

հաջողվել է հաստատել մի շարք գիտական իրողություններ, դրոցթներ, որոնք սկզբունքորեն փոխում են գեղարվեստական կրթօջախներում հագուստի մոդելավորման ձևատեսության ռազմավարությունն ու վարքագիծը:

Բուհում հագուստի մոդելավորման ժամանակակից տեխնոլոգիաների (առաջին անգամ մշակված) կիրառումը նոր մոտեցում է Հ. Մարոնյանի հեղինակած նմուշօրինակում:

Ուսանողների մասնագիտական կրթության ուսումնասիրման՝ ատենախոսի մշակած հատուկ քարտեզն ամրագրել է նրանց աշխատանքային-գեղագիտական իմացությունների, ունակությունների, հմտությունների աստիճանը և համապատասխան որակները գործունեության տարբեր ոլորտներում:

Ստեղծագործական գործունեության այս բնագավառը որոշարկվում է չորս ցուցանիշներով.

- Տվյալ բնագավառում ուսանողների մոդելավորման իմացությունների, ունակությունների, հմտությունների աստիճանով.
- Աշխատանքային-գեղագիտական գործունեության ազդակային դրդապատճառներով.
- Ուսանողների կողմից հագուստի նախագծման խնդրառու վիճակների լուծման ճշգրտությամբ.
- Գործունեության տարբեր ոլորտներում և մարդկանց հետ փոխհարաբերություններում աշխատանքային կենսունակության պատճառով:

Այս ըստակարգերը կիրառելով հեղինակին և փորձարարական պարապմունքներ անցկացրած մասնագետներին (դասախոսներին) հաջողվել է որոշարկել ուսանողների աշխատանքային կարողությունների ինքնօրինակ աստիճանները և դրանց ընդհանրացված բնույթի հաղորդումը:

Ատենախոսության հեղինակն ըստ նշված օրինաչափությունների առանձնացնում է ռազմարվեստական վարքագծային և համալիր-կազմակերպված

ուղղորդումներ: Այն կապելով ուսանողների մոդելավորման նախագծումների կարողությունների հեռանկարային ծրագրերի մշակմանն ու իրականացմանը, որոնք ուղենշում են իմացական գործունեության ծրագիրն ու ուսանողների վրա համալիր աշխատանքային ներգործությունների գլխավոր ուղիները;

Հագուստի մոդելավորման ժամանակակից տեխնոլոգիաների հնարավորությունն ու անհրաժեշտությունը (հիմք ընդունելով ազգային տարազի ուսումնասիրությունը), պահանջ է առաջանում, դասախոսների, օժանդակ անձնակազմի հատուկ պատրաստվածություն, հրաժարվում ավանդականից, ուսուցման գործընթացին տեղայնացված, կաղապարված մոտեցումներից:

Ի մի բերելով ասվածը՝ հարկ է ընդգծել, որ հեղինակի ատենախոսական հետազոտության արդյունքները արտացոլված են նրա հրապարակումներում (մոթադական ցուցումների, հոդվածների տեսքով):

Ընդհանուր առմամբ դրական գնահատելով Հ. Կ. Մարոնյանի հետազոտությունը, հարկ է նշել նրա առանձին բացթողումները.

1. Հետազոտության մեջ ըստ ժամանակակից չափորոշիչների արժանավույն արտացոլված չեն կրթության մասին դրույթները, դասախոսների աշխատանքային հայեցակարգը:
2. Բավարար չափով լուսաբանված չէ դպրոցի ուսուցիչների փորձը:
3. Հարանցիկ է ներկայացված արտերկրի համապատասխան կառույցների նախագծային աշխատանքների փորձը:
4. Պարզ չէ, թե հեղինակը մասնավոր մեթոդիկաները դիտում է որպես մանկավարժական տեխնոլոգիայի բաղադրամաս, թե առանձին կատեգորիա, քանի որ ճշգրտված չեն <<մանկավարժական տեխնոլոգիա>> և <<մանկավարժական տեխնիկա>> եզրերի բաղադրակազմի գիտական շրջանակները:

   Նշված վրիպակները մեծ մասամբ ունեն օբյեկտիվ պատճառներ և կախում չունեն միայն հեղինակից և այդ իսկ պատճառով էլ չեն կարող

նվազեցնել Հ. Մարոնյանի ատենախոսության ընդհանուր դրական գնահատականը;

Ատենածոսության հիմնական բովանդակությունն ամբողջովին արտացոլված է նրա հրապարակումներում, գիտական ինքնուրույն աշխատության բովանդակությունը համապատասխանում է ատենախոսությանը ներկայացվող պահանջներին:

Վերոնշյալը հնարավորություն է ընձեռնում հանգելու ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ, որ Հռիփսիմե Մարոնյանի <<Հագուստի մոդելավորման դասավանդման հիմունքները ազգային տարազի համատեքստում>> խորագրով ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ ԲԿԳԿ-ի պահանջներին իսկ նրա հեղինակն արժանի է մանկավարժական գիտությունների թեկնածուի աստիճանի շնորհման ԺԳ.00.02-<<Դասավանդման և ուսուցման մեթոդիկա (կերպարվեստ) մասնագիտությամբ:

Պաշտոնական ընդդիմախոս.
մ.գ.դ., պրոֆեսոր, ՌԴ ԿԱ ակադեմիկոս,
ՀՀ արվեստի վաստ. գործիչ՝ Լ. Ս. ՆԵՐՍԵՍՅԱՆ

06.03.2025

Հաստատում եմ
Խ. Աբովյանի անվան հայկական պետական
մանկավարժական համալսարանի
գիտական քարտուղար ՄԱՐԻԱՄ ԻՍՊԻՐՅԱՆ